Նիզ

արհեստի մասին

203
ա-61

03 AUG 2009
203
Կ-61

…ԱՐԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆՑ ԹԻՒ 12

# ԵՐԳ

## ԱՐԵՒԱԳԱԼԻ ԺԱՄՈՒՆ

ԵՒ

# ԵՐԳ

## ՎԱՍՆ ՀԻՆԳ ԱՒՈՒՐՆ

## ԱՐԱՐՉՈՒԹԵԱՆ

Ի ՊԷՏՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԱՆԿԱՆՑ

1921

ՏՊԱԳԻՐ. Մ. ՏԷՐ-ՍԱՀԱԿԵԱՆ

203
Կ-61

08 APR 2013
2276

# ԵՐԳ

Տեառն ՆԵՐՍԻՍԻ վասն երկրորդ աւուր
Արարչութեան, եւ վասն Երկնային զօրացն

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ

(Ա.ւ գ.) Արարչական բանին հրաման
Ի յերկրորդում աւուր բոլորման
Ցրզջուրան ՚ի ջուրան բաժանեաց,
Հաստատութեամբ պարունակեաց.
Որով զաշխարհս հովեցինաց
Անջրպետեաց ի հրեղինաց.
Ընդ նոսին որդի՛ք լուսոյ՝
Տո՛ւք օրհնութիւն Երրեակ Լուսոյն:

Բազմաչեայ հոյլք Քրովբէից՝
Երեքարբեանքդ Սրովբէից,
Աթոռք անեղ Աստուածութեանըն
Համագոյ Երրորդութեան,
Բարեխօս լերուք առ Տէր
Վասն մանկանց եկեղեցւոյ Ընդ.

Գերագոյն Իշխանութիւնք՝
Եւ ամփոփոխ միշտ Տէրութիւնք
Անյաղթելի սուրբ Զօրութիւնք՝
Ի յԱրարչին փառատրութիւն,

203
35-61



Աղաչեցէ՛ք զՏէրն ողորմած
Անտես չառնել զգործ ձեռաց. Ընդ.
Դասք անմարմնոցըն պետութեանց
Հրեշտակապետըք բարձրութեանց,
Հօրիք հրեղէնք եւ սպասաւորք
Հրեշտակաց զինուորութիւնք,
Մաղթեցէ՛ք զՏէրն տերանց
Վասն մարդկան երկրաւորաց. Ընդ:

Երկնաւորաց դասուց վերնոց՝
Օրհնաբանից քոց զըւարթնոց
Թագցրացի՛ն առ քեզ զթած
Որ վա՛ն մեր ձայն մաղթանաց,
Զօրս եւ տացես մեզ պահապան
Յայսմ հետէ մինչ ՚ի վախճան. Ընդ.

Զօրութեանց եւ տէրութեանց՝
Իշխանութեանց եւ Պետութեանց,
Եւ ամենայն Անուանելոց
Որք ի յերկինս պաղատանօք,
Ընկա՛լ Քրիստոս ուրախութեամբ
Զմեզ յօր մահու եւ յարութեան.
Ընդ նոսին օրհնել հոգւով
Ըզքեզ ընդ Հօր փառաւորելով.

1008
35070

## ԵՐԵՔՇԱԲԹԻ

Վասն Երրորդ աւուր Արարչութեան, եւ վասն Երրորդի դարուն. եւ ի Յովհաննէս Մկրտիչն

Էական բանն որ ընդ Հօր
Արարչակից և համազօր,
Յերրորդ աւուր զջուրսն զատոյց՝
Ըզբոյսս և զտունկըս բըղխեցոյց,
Իսկ 'ի յերրորդ դարուն դարձեալ
Զջուրսն հեղեղ ցամաքեցոյց.
Զնոյ տապանաւն իւր ապրեցոյց,
Զկենդանեաց սեռս աճեցոյց.
Տո՛ւք օրհնութիւն անճառ լուսոյն
Հօր եւ Որդւոյ եւ Սուրբ Հոգւոյն։

Ընդ ծառոց երկրի զգալեաց
Տընկեաց՝ և զտունկ իմանալեաց.
Զհեղեղ մեղացն ցածուցեալ,
Զգասս արդարոց բազմացուցեալ.
Յորոց եւ մեծն 'ի ծնունդս կանանց
Միջնորդ շնորհաց եւ օրինաց. Տուք.

Թագաւորին երկնից զինուոր՝
Արքայութեանն աւետաւոր.
Խնդրեա՛յ զինել ելս 'ի սրտի
Առ ի՛ հովուէս արտմա՛յանէ,



Յուխտեալ տեղին Տէրունական,
Ի խոստացեալն որդւոց մարդկան. Տուք.

Ժառանգին Հօր սպասաւոր,
Եւ յարգանդէ երկրպագող,
Կարապետ եւ Մկրտիչ
Այնմ որ մեղաց մերոց քաւիչ.
Լե՛ր բարեխօս առ նոյն զըթած՝
Ջնջել բզգիր մեր յանցանաց. Տուք.

Ի Հօրէ լոյս ծագեցար
Մեռեալ բնութեանս կենդանարար,
Առաքեցեր յառաջընթաց.
Սուրբ զՅովհաննէս քարոզ կենաց.
Սորին հայցմամբն Ամենակալ,
Ըզպաղատանս մեր ընկա՛լ. Տուք.

Լուսաշաւիղ յերկինս եկին
Հողանիւթեայ սուրբ Հրեշտակին.
Արժանացո՛ ըզմեզ նորին
Նեղ եւ անձուկ ճանապարհին.
Զի հետեւող գոլով նորին
Հօր քո վերին օթեւանին,
Եւ երգեսցուք ընդ երջանկացն
Որդւոց լուսոյ քեզ երգ փառաց։

## ՉՈՐԵՔՇԱԲԹԻ

Վասն Չորրորդի աւուր Արարչութեանն, եւ
վասն Չորրորդի դարուն, եւ Աւետեաց
Աստուածածնին։

Խաւարն անգոյ և սկըզբնածին
Հալածեցաւ յօրն առաջին.
Լոյսն այն պայծառ յօր չորրորդին
Յարեգական նիւթ հաւաքեալ.
Լուսինն 'ւ տիպ լուսոյ առեղծեալ՝
Եւ աստեղաց պարք յօրինեալ,
Որով օրհնի Ստեղծողն էից
Ի բանաւոր պաշտօնէից։

Ծածկեալ խորհրդն ծանուցաւ
Չորրորդ դարուն Իսահա առ.
Ի չորրորդ օր դարձեալ Հրեշտակն
Ետ զաւետիսն Կուսական
Թէ լոյսն որ ոչ բովանդակի՝
Ի քէն մարմնով պարունակի.
Յոր օրհնեցայք ազգ երկրածինք
Տո՛ւք օրհնութիւն Պըտղոյ կուսին։

Կուսին նախնւոյ մօրն Եւայի՝
Յորմէ Ադամն հին պարտի.



Բարձան անէծքըն ադամական
Քո սուրբ ծնընդեամբ կոյս Մարիամ,
Աղաչեա՛ զքո Միածինն՝
Թողուլ զմեզս որդւոց նոցին. Յոր.

Հարսն ընծայեալ՝ կրէ յերկինս
Յոր համբառնամք առ քեզ զհոգիս,
Յոր լսելոյ քո զաւետիս՝
Խնդրեա՛ լինել մեզ լսելիս,
Զձայն աւետեաց քո Միածնին՝
Եթէ՝ Եկա՛յք օրհնեալք Հօր իմ. Յոր.

Զայնիւ առ քեզ Տէ՛ր պաղատիմք
Եւ առաջի քո անկանիմք.
Աղաչանօք Աստուածածնին
Շիջո՛ ի մէնջ զբոց հնոցին.
Տո՛ւր արտասուօք զմեղս ջնջել
Եւ վերստին զմեզ նորոգել. Յոր.

Ղեկավար ճարտարապետ,
Անցեր ընդ ծով կենցաղս անհետ,
Վէրաբերեա՛ ընդ Պետրոսի
Զմեզ 'ի յալեաց մեղաց ծովէս.
Պաղատանօք գերազանցին,
Անապական քում Ծնողին. Յոր.

## ՀԻՆԳՇԱԲԹԻ

Վասն Հինգերորդի Աւուր Արարչութեանն,
Վասն Հինգերորդի դարուն, եւ ի սուրբ
Առաքեալն Քրիստոսի

Ճառագայթեալ Բանն ՚ի Հօրէ՝
Յոր հինգերորդըն հրամայէ,
Բղխել ի ջրոց սեռս կայտառաց
Եւ թեւաւորս օդականաց.
Իսկ ի դարուն հինգ մլրրային
Յամայն եւ ի ծոցն Իսրայէլ հին.
Տացուք հրաշից Ներգործողին
Պատիւ եւ փառս անեղ Բանին:

Մաքրապէս օրինակի
Առաքելոցըն Քրիստոսի,
Որք ի ծովէն Տիբերական
Ի յերկնային կոչեցան.
Անցին ընդ ծով աշխարհական,
Եւ ի Հոգին մըկըրտեցան. Տաղ.

Յուրախութիւնն անդրանական
Ի հարսանիսն անապական՝
Զձեզ առաքեաց Հայըն փառաց
Հրաւիրատուք արամականաց,



Յուրբ Հարսանեացն այն հայցեցէ՛ք
Ընդ ձեզ լինել մեզ պարակից. Տաղ.

Նորոգողք ախեղերաց
Ի նախահօրըն յանցանաց,
Նորափետուր զարդարեցիք,
Զեկեղեցիս հեթանոսաց.
Պաղատեցէք առ նոյն զթած
Զմեզ նորոգել ի հնոյ մեղաց. Տաղ.

Շինող էիցս համայնից
Արարածոց ի յանգոյից՝
Նոյն շինեցիք զ՚Եկեղեցի՝
Վէմդ ի վերայ վիմին բանի.
Ընդ նմա հիմունան ի նոր Սիոնի
Ըզմեզ յօղեա՛ շինամբ ի նոյն. Տաղ.

Ուրախացաւ գնացիւք գետոց
Քաղաք ի քէն շինեալ Յիսուս,
Յորմէ վտակք շնորհաց հոսեն,
Զօգխ մարդկան առոգանեն.
Արդ՝ ե. մեզ ի ջրոյն կենաց
Հայցմամբ Հոգւոյն մատռուակաց.
Զի բանաւոր երկիրս քո
Պտղաբերէ ի փառս քո:

## ՈՒՐԲԱԹ

Վասն Վեցերորդի աւուր Արարչութեան. եւ վասն Վեցերորդի դարուն եւ ի Խաչելութիւնն Քրիստոսի:

Զընծայութեալ բնութեամբ Բարւոյն.
Ունել միայն զանձառ բարին,
Այլ ստեղծեալ մարդ քեւ պատկեր
Ի վեցերորդն առաւօտին,
Եւ ի չորրորդ ժամ զկազմածինն
Ի յօգնութիւն եւ Հոգածնին,
Զորս ի Դրախտին եդ վայելել,
Բայց ի պտղոյն մահու արգել:

Պատանձեալ առ պտուղին՝
Յետ յանցանաց Ադամըն հին,
Զկինըն պատճառ եդեալ խոստման,
Եւ Կինըն զօձըն զպատճառն.
Որով երկիրս այս անիծաւ,
Փուշ և տատասկ ի սմա բուսաւ,
Վճիռ մահու մարդոյն տրւաւ
Դառնալ ի հող ուստի ստեղծաւ:

Զընջել փութայր Հայրըն փառաց
Ըզգիր պարտեաց մեր յանցանաց.
Որով զգեցաւ Որդին գըթած
Ի վեց դարուն զմարմին մեղաց.
Հօր հաճութեամբ ի մահ Խաչին
Եկըն կամաւ ի յՈւրբաթին:



Գառըն զենաւ ի հին զատկին
Փոխան զատանցն օրինակին:

Ուստի լուսոյ պատուիրանին
Արդարութեան ճանապարհին,
Բարձրանալով քո ի Խաչին
Բարձրացուցեր զմեզ ի յերկինս.
Քո անպատում խոնարհութեամբդ.
Եւ կամաւոր Խաչելութեամբդ
Հաշտեաց ընդ մեզ, Տէր, գթութեամբ,
Եւ թո՛ղ զմեզս ողորմութեամբ:

Սոսկալից Սերովբէից
Եւ ահաւորդ Քրովբէից.
Խոնարհեցար ի չարչարանս
Զարչարելի բնութեամբ մարդկան.
Ի խաչին զմեզս բարձեր
Եւ զդատակնիք մահու լուծեր.
Հաշտեա՛ց ընդ մեզ, Տէ՛ր գթութեամբ
Եւ թո՛ղ զմեզս ողորմութեամբ.

Վեհագոյն բնութեանց էից
Եւ Արարիչդ բոլորից.
Յորժամ ծագես զԽաչիդ նշան
Ի գալստեան քո միւսանգամ.
Զերկրպագուս այժմ հաւատով
Լուսաւորեա նորին լուսով.
Զի համաձայն խաչազգեցիցն:
Ըզքեզ օրհնեմք յաւիտենից:

# ԵՐԳ ԱՐԵՒԱԳԱԼԻՆ

Յարուցելոց մինչ 'ի մահու. ի հիւսիսոյ և հարաւոյ. ամենայն ազգ և ազգինք, 'ի օրհնութիւն նոր օրհնեցէք զարարիչն արարածոց. որ ծագեաց բղխոյս արեգականն այսօր յաշխարհս:

Եկեղեցիք արդարոց. փառաբանիչք ամենասուրբ Երրորդութեանն յառաւօտս լուսոյ զառաւօտ խաղաղութեան Քրիստոս գովեցէք ընդ հօր և հոգւոյն. որ ծագեաց բղխոյս զլուսութիւնն իւրոյ ի մեզ:

ՅՈՐԴՈՐԱԿ

Յարուցելոց յարուցմամբ մանկունք սիոնի օրհնեցէք միշտ անդադար զծագողն լուսոյ:

Եկեղեցիք արդարոց և փառաբանիչք. բարեբանեցէք որ ետ զիմաստս լուսոյ:

ՔԱՐՈԶ

ԱՂՕԹՔ

ՍԱՂՄՈՍ ՂԹ.

ԵՐԳ

Ճգնաւորք Աստուծոյ, և ժառանգորդք երկնից արքայութեանն. որք փոխանակեալք զանցաւորս առիք զանանցըն բարութիւնն. բարեխօսեցէք առ Տէր վասն մանկանց եկեղեցւոյ:



Նահատակք զանձալիք, և սիրեցեալք ի յերկնաւոր հօրէն. որք մկրտեցայք ընդ Քրիստոսի արեամբ ձերով, ի մահ խաչին. բարեխօսեցէք առ Տէր վասն մանկանց եկեղեցւոյ:

Մարտիրոսք ցանկալիք, և օթեւանք հոգւոյն ճշմարտութեան որք յաղթեցիք հոգւով կարեաց և ցանկութեան. բարե:

Գովելիք աշխարհի, և բաղձալիք վերնոցըն պետութեանց. որք երանութեան մասին հասիք քան զամենայն որդիս մարդկան. բարե:

Կամաւոր պատարագք, մանկունք տիօք և կատարեալք իմաստութեամբ. որք փոխանակ կաթին արբիք զգինին զմայլեցուցիչ. բարե:

ՅՈՐԴՈՐԱԿ

Ճգնաւորք ճշմարիտք վկայք Քրիստոսի. բարեխօսեցէք առ Տէր վասն անձանց մերոց:

Նահատակք կենդանիք սիրովք Քրիստոսի. որք չարչարեցայք մարմնով վասն անուանըն Տեառն:

Մարտիրոսք անկալիք մարդկան բղձալիք. հայցեցէք ի սուրբ հոգւոյ տալ մեզ զշնորհս:

Գովելիք վերնոց դասուց. պարծանք աշխարհի. խնդրեցէք զխաղաղութիւն տալ եկեղեցւոյ:

Կամաւոր սուրբ պատարագք հասակաւ մանկունք. հայցեցէք լինել և մեզ ձեզ պսակակից:

**ՄԱՂԹԱՆՔ**

**ՔԱՐՈԶ**

**ԱՂՕԹՔ**

**ՍԱՂՄՈՍ ԵՐ.**

ԵՐԳ

Լո՛յս, արարիչ լուսոյ առաջին լոյս. բնակեալդ 'ի լոյս յանմատոյց, հայր երկնաւոր. 'ի դասուց լուսեղինացն օրհնեալ 'ի ծագել լուսոյ առաւօտուս, ծագեայ ի հոգիս մեր ըզլոյս քո իմանալի:

Լո՛յս, 'ի լուսոյ ծագումն արեգակն արդար. անճառ ծնունդ հօր որդի. յառաջ քան զարեւ անուն քո գովեալ ընդ հօր. ի ծա:

Լո՛յս, 'ի հօրէ ըղխումն աղբիւր բարութեան, հոգիդ սուրբ Աստուծոյ. մանկունք եկեղեցւոյ ընդ հրեշտակս ըզքեզ բարեբանեն. ի ծա:

Լո՛յս, երրեակ և մի անբաժանելի սուրբ երրորդութիւն. զքեզ ընդ երկնայնոցն երկրածինքս միշտ փառաւորեմք. ի ծա:

**ՑՈՐԴՈՐԱԿ**

Անեղանելիդ Աստուած հայր ամենակալ. ընկալ զաղաչանըս մեր քոց պաշտօնէից:

Ի հօրէ ծագումն անճառ, արեգակն արդար. ծագեայ 'ի յանձինըս մեր զլոյս ողորմութեան:



Ի հօրէ ըղխեալ հոգի, աղբիւր բարութեան. լուսով քով լցո ըզմեզ յայսմ առաւօտուս:

Երեք անձինք և մի բնութիւն, մի Աստուածութիւն. զքեզ խոստովանիմք յաւէտ սուրբ երրորդութիւն:

**ՄԱՂԹԱՆՔ**

**ՔԱՐՈԶ**

**ԱՂՕԹՔ**

**ՍԱՂՄՈՍ ԽԲ.**

ԵՐԳ

Ճանապարհ, և ճշմարտութիւն. և կեանք Քրիստոս. առաջնորդեայ հոգւոց մերոց. յերկրէ ելանել յերկինս:

Դուռն կենաց մտից Յիսուս. մոյծ և ըզմեզ առ Հայր քո և հոգի, երգել միշտ ըզփառս:

**ՑՈՐԴՈՐԱԿ**

Ճանապարհ, բարի Քրիստոս և ճշմարտութիւն, առաջնորդ հոգւոց մերոց յերկրէ 'ի յերկինս:

Դուռըն կենաց մտից Յիսուս. Աստուած ճշմարիտ. մոյծ և զմեզ առ հայրըդ քո. հոգւովդ սրբով:

**ՄԱՂԹԱՆՔ**

**ՔԱՐՈԶ**

**ԱՂՕԹՔ**

# ԶԱՐԴԱՐԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

ՀԻՄՆՈՒԱԾ 1863ԻՆ

ՊՈԼԻՍ, ՉԱՔՄԱՔՃԸԼԱՐ ԵՕԳՈՒՇՈՒ ԹԻՒ 32

Զարդարեան գրատունը իր հիմնի հաստատութեան յիսնամեակին կրնայ գոհացնել իր յաճախորդները ա-մէնէն ստիպողական գրքերը հայթայթելով կարգա-թեամբ: Իր գրասէր բարեկամներուն կը թելադրէ ու-նենալ հետեւեալ գրքերը.

| | |
|---|---|
| Ցեղատակարան 3 հատոր կազմուած | 500 դր. |
| Արգասաւորութիւն Է. Զօլա 3 հատոր | 100 » |
| Թշուառներ Վ. Հիւկօ 10 հատոր | 500 » |
| Իննսուն երեք Վ. Հիւկօ 3 հատոր | 100 » |
| Տասնօրեակ, Պօքաչիօ 2 հատոր | 100 » |
| Հեղինէ կամ Կապանք մը 2 հատոր | 75 » |
| Խորհրդաւոր աղջիկ մը 1 հատոր | 50 » |
| Թա... կալարդ կինը 1 հատոր | 60 » |
| Գեղ...ին Յրմանին 1 հատոր | 25 » |
| Պատերազմ եւ Խաղաղութիւն Թոլսթոյ 6 հատ. | 160 » |
| Ազնիւ Համիտ Շէրլոք Հոլմս Կ. Ուաեան 3 » | 90 » |

Զարդարեան գրատան այս տարուան նոր հրատա-րակութիւններն են. — Դատաստանի օրը՝ 5 դր. — Ա-բու Լայա Մահարի 10 դր. — Տիեզերական խաղաղու-թիւն՝ Վ. Հիւկօ 5 դր. — Զարհուրած Երգարան 5 դր. — Հայերէն ֆրանսերէն խօսակցարանութիւն 3 դր. — Անգլիերէն խօսակցարանութիւն 30 դր. — Պաշտօնս խարխափ է (կատակերգութիւն) 5 դր. — Գի-տութիւններ (գաղտնիք) 30 դր. — Աշխարհագրու-թիւն Պալճեան 20 դրուշ. — Երկու Աւելի Աղջիկ 15

ԳԻՆ 100 ՓԱՐԱ

ՀՀ Ազգային գրադարան
NL0156965